# ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ և Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ատենապետությամբ գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի և եպիսկոպոսաց դասի համատեղ խորհրդակցական ժողով:

Ժողովի ընթացքում քննարկվեցին Հայ Եկեղեցու կանոնադրությանը, եպիսկոպոսաց ժողովի իրավասություններին և Ամենայն Հայոց 132-րդ կաթողիկոսի ընտրությանը վերաբերվող հարցեր:

Ժողովականներն անդրադարձան նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700 և Քրիստոսի ծննդյան 2000-ամյակների տոնակատարությունների կազմակերպմանն առնչվող հարցերին:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*